ձգտումով։ Հելլադայից Արգոնաւի դիւցազներն եկան Կողքիս, որպէս զի ոսկի գեղմը յափշտակեն։ Մակեդոնացի Ալեքսանդրը պարսկական պատերազմի ընթացքում զօրք ու զօրավար էր ուղարկել, որ Փիսոնի ոսկի հանքերը գրաւէ։ Փիսոնը նուաճել, տիրել ու շահագործել երազել են բոլոր Բաղդէական, Հաթական, Եգիպտական, Ասորական, Պարսկական եւ Հռովմէական աշխարհակալները։ Բայց Ճորոխն այնպիսի՛ անընկճելի գազան է, ա՛յնքան ըմբոստ, որ չեն կարողացել նորան կեմով բռնել, սանձել ու թամքել, ո՛չ կարողացել են այդ ապառաժներից ներս թափանցել, ո՛չ էլ ճանապարհ ու կամուրջներ չինել, որ կարողանան ընկճել եւ ստրկացնել։

Այսօր Ճորոխի ափերին նկատելի են հարիւրաւոր բովեր, որոնք մասնագէտների կարծիքով 4000—5000 տարի շարունակ պեղուել եւ շահագործուել են. բայց չնորհիւ Եւրոպական մեքենավար հալոցների արտակարգ զարգացման, ԺԹրդ դարում անզործութեան դատապարտուեցան շուրջ հարիւր տարի։ Զմշակուեցան ո՛չ միայն մետաղի՝ պղնձի, ոսկու, արծաթի, երկաթի, արճեճի, այլ նոյն իսկ ծծումբի, քարածխի, սաթի, մարմարքարի, ներկերի եւ աղի հանքերը։

Այսօր, Ճորոխի Աւազանի ամէն